ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ (2020-21 ՈՒՍՏԱՐԻ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարությամբ և իր գործունեությամբ մշտապես կարևորել է մասնաճյուղում ուսումնական գործընթացների անխափան և հստակ կազմակերպումը, ուսումնառության գործընթացն ապահովել է անհրաժեշտ ռեսուրսներով և մշտապես բարելավել ու զարգացրել է դրանք, տրամադրել է բարձրակարգ կրթություն՝ այդ գործընթացում ներգրավելով Մայր բուհի և մասնաճյուղի լավագույն պրոֆեսորադասախոսական կազմը, ձգտել է բավարարել իր ներքին և արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, և ամենակարևորը, մասնաճյուղն իր գործունեությամբ և ձեռքբերումներով ձգտում է դառնալ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն ոչ՝ միայն տարածաշրջանում, այլ նաև Հայաստանում:

Մասնաճյուղի ուսանողակենտրոն գործունեությունն ու թափանցիկ կառավարումը հնարավորություն են տալիս և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցներին մշտապես իրազեկված և տեղակցված լինել բոլոր գործընթացներից, նաև դառնալ դրանց արդյունավետության գնահատման անմիջական մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը: Մասնաճյուղը պարբերաբար անդրադառնում է իր շահակիցների բարձրաձայնած խնդիրներին ու առաջարկներին՝ դրանց լուծման և իրականացման համար պլանավորելով իր հետագա գործունեությունը:

Նշեք, որ մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տարբեր մեխանիզմներով և ուսումնասիրություններով վեր է հանում շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

Հերթական ամենամյա ուսումնասիրությունո առցանց հարցման միջոցով իրականցվել է մասնաճյուղի 2020-21 ուստարվա շրջանավարտների շրջանում: Հարցման նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, ամփոփիչ ատեստավորման քննությունից հետո, դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը: Նշեք, որ ընդգծված տեսանելի խնդիրները հասցեային ունենալու համար շրջանավարտներից պահանջվել է նշել միայն կրթական ծրագիրը, որի շրջանավարտներն են իրենք:

2020-21 ուստարում մասնաճյուղն առկա ուսուցման 10 կրթական ծրագրերով տվել է 150 շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է **127-ը,** այսինքն շրջանավարտների **85%-ը,** որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն է.

Կրթական ծրագրի անունը	Շրջ. թիվը	Մասն.	%
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա **(ԻԿՄ)**	20	19	**95.0%**
Քարտեզագրություն և կադաստրային գործ **(ՔԿԳ)**	5	4	**80.0%**
Ֆինանսներ (ըստ ոլորտի) **(Ֆինանս.)**	17	17	**100.0%**
Զբոսաշրջություն **(Զբոս.)**	6	6	**100.0%**
Պատմություն **(Պատմ.)**	8	8	**100.0%**
Հայոց լեզու և գրականություն (ՀԼԳ)	10	9	**90.0%**
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա **(ՏՄՄ)**	41	32	**78.0%**
Անգլերեն լեզու և գրականություն **(ԱԼԳ)**	21	19	**90.5%**
Ֆրանսերեն լեզու և գրականություն **(ՖԼԳ)**	3	3	**100.0%**
Դիզայն	19	10	**52.6%**
Ընդամենը՝	**150**	**127**	**84.7%**

Մասնակցության այս ցուցանիշները վկայում են, որ հացման արդյունքները, ամենայն հավանականությամբ, կարելի է համարել արժանահավատ, նպատակային, հետևաբար նկատվող խնդիրներն առարկայական և ուշադրության արժանի:

Հետաքրքիր գնահատական է իր մեջ պարունակում շրջանավարտների միջին որակական գնահատականի (ՄՈԳ-ի) վերաբերյալ ստացված ցուցանիշը, որը մասնաճյուղին՝ որպես կրթական հաստատություն, բնութագրում է լավ կողմերից, ցույց է տալիս կրթության բարձր մակարդակը, նաև տարածաշրջանում գիտելիքներով ու մասնագիտական բարձր կարողություններով նոր կադրերի պատրաստման մասին:



Ինչպես ցույց են տալիս արդյունքները մասնաճյուղի 2020-21 ուստարվա հարցմանը մասնակցած 127 շրջանավարտներից **35-ի** (28%-ի) ՄՈԳ-ը եղել է 18-20 միավոր, իսկ **70-ինը**՝ 13-17: Այսինքն, հարցմանը մասնակցած շրջանավարտների **83%-ը** սովորել է լավ և գերազանց գնահատականներով:

Այդ ցուցանիշի անուղղակի գնահատումն է նաև այն հանգամանքը, որ հարցմանը մասնակցած շրջանավարտների **54%-ը** (68 հոգի) պատրաստվում է շարունակել ուսումը մագիստրատուրայում, ինչը վկայում է մասնաճյուղում ստացած կրթության նկատմամբ վստահության և ավելին ձեռք բերելու ցանկության դրսևորման մասին:

Հարկ է նշել և փաստել, որ մասնաճյուղի ընթացիկ ուստարվա շրջանավարտների **36%-ին** արդեն հայտնի է, թե որտեղ է աշխատելու, իսկ հարցման մասնակիցների **20%-ը (25 հոգի)** արդեն աշխատում է: Այս ցուցանիշի մեջ առանձնահատուկ պետք է նշել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտներին՝ նրանց **47%-ը** (19-ից 9-ը) արդեն աշխատում է և աշխատում է մասնագիտությամբ. նրանց մի մասն աշխատում է մարզի դպրոցների «ԱրՄաթ» ինժեներական լաբորատորիաներում որպես խմբակավարներ, մյուսներն աշխատում են Digital Wave ծրագրավորման կենտրոնում և Իջևան քաղաքում գործող ծրագրավորման կազմակերպություններում:

Առանձնացնենք նաև «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի շրջանավարտներին: Ծրագրի 6 շրջանավարտներից **4-ն արդեն աշխատում է**, և աշխատում է իր մասնագիտությամբ:



Այս արդյունքները վկայում են վերջին տարիներին մարզում SS և զբոսաշրջության ոլորտների պահանջվածության ու զարգացման մասին, նաև տարբեր կազմակերպությունների հետ մասնաճյուղի ակտիվ համագործակցության մասին: Օրինակ, ակտիվ պրակտիկաների շրջանակներում մեր շրջանավարտները հնարավորություն են ստանում դեռևս ուսումնառության ընթացքում կարգավորել իրենց ապագա կարիերայի հարցերը:

Այս արդյունքները փաստում են, որ մասնաճյուղի գործունեությունն առավելագույնս համապատասխանեցվում է աշխատաշուկայի պահանջարկին, և որ մեր շրջանավարտները պահանջված են աշխատաշուկայում:

Այժմ առանձին-առանձին դիտարկենք շրջանավարտների բավարարվածությունն ըստ առանձին ոլորտների:

1. Բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից

Նշենք, որ կրթական ծրագրերի բավանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից 2020-21 ուստարվա շրջանավարտների բավարարվածության գնահատականներն առանձնապես բարձր չեն, ընդ որում դրանք ցածր են նաև նախորդ ուստարիների համապատասխան գնահատականներից: Հակված ենք մտածելու, որ այս գնահատականների մեջ ավելի շատ արտահայտված են առցանց կրթության անհարմարություններով պայմանավորված կարծիքները: Չնայած պետք է նշել, որ մասնաճյուղի և համապատասխան բաժինների ջանքերի շնորհիվ առցանց ուսումնառությունը մասնաճյուղում կազմակերպվել է հստակ, անխափան և սահուն: Մասնաճյուղը կարողացել է կարճ ժամանակում բարելավել իր ռեսուրսները, դրանք մատչելի և հասանելի դարձնել թե՛ ուսանողների, և թե՛ դասախոսների համար, ապահովել ինտերնետի անխափան աշխատանքը, իսկ ամենակարևորը կազմակերպել Zoom հարթակներ՝ դասընթացների իրականացման համար և այլն:

Արդյունքները ցույց են տալիս, որ մեր շրջանավարտները, ինչպես նախկինում, այս անգամ նույնպես բարձր են գնահատել մասնաճյուղում ստացած իրենց գիտելիքները (միջին միավորը **4.1**

միավոր), և հարկ է նշել, որ արդյունքի համեմատաբար ցածր լինելու վրա իրենց ընդգծված ազդեցությունն են ունեցել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերի շրջանավարտների տված ցածր գնահատականները (համապատասխանաբար՝ **3.7 և 3.6** միջին գնահատական)։ Ներքևում բերված դիագրամի արդյունքներից երևում է, որ մնացած կրթական ծրագրերի շրջանավարտները հիմնականում բավարարված են մասնաճյուղում ստացած իրենց գիտելիքներից (**4.5-5** միջին միավոր)։ Լրացման կարգով նշեք, որ այլ ուսումնասիրությունների շրջանակներում մեր ուսանողները միշտ փաստել են, որ օրինակ, իրենց տեսական գիտելիքները բավարարում են պրակտիկաների անցկացման ժամանակ։



Այսքանը նշելուց հետո, իհարկե նույնը չենք կարող ասել ձեռք բերած մասնագիտական կարողությունների և գործնական հմուտությունների, ինչպես նաև օտար լեզուների իմացության մակարդակի մասին, որոնց միջին գնահատականը 4-ից փոքր է։



Այստեղ մասնաճյուղն ուշադրության արժանի և համապատասխան լուծումներ պահանջող **<u>խնդիրներ ունի</u>**, որոնք մշտապես կան ու չնայած գործադրվող ջանքերին (այդ թվում գործնական դասաժամերի ավելացում, պրակտիկաների ճիշտ վայրերի ընտրություն ու կազմակերպում և այլն) առանձնապես բարելավել դեռ չի հաջողվում։ Ուղղակի պետք է նշել, որ այդ խնդիրներն առավել ընդգծված առկա են մի քանի կրթական ծրագրերում, որտեղ գործնական և կիրառական մասերը շատ են («Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա») և հավանաբար

պահանջվում են յուրահատուկ մոտեցումներ. գործնական և պրակտիկ դասընթացների կազմակերպման նոր մոտեցումներ, նոր լաբորատորիաների ստեղծում, ուսանողների ինքնուրույնության և գործնական կարողությունների զարգացում և այլն:

Թե՛ հարցման, և թե՛ խմբային տարբեր քննարկումների արդյունքում ֆիքսել ենք, որ մեր ուսանողները, այդ թվում նաև շրջանավարտները, **բավարարված չեն օտար լեզուների իմացության** մակարդակից և գտնում են, որ բուհն առանձնապես չի նպաստում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը: Կարող ենք փաստել, որ մասնաճյուղն այս ուղղությամբ որոշ քայլեր է կատարել, մասնավորապես որոշ կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ավելացվել են մասնագիտական օտար լեզվի (հիմնականում անգլերեն լեզվի) ժամաքանակները: Այդ խնդիրը մասնագիտության բնույթից կախված հիմնականում առկա է և արդիական «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (միջին գնահատականը 3.4), «Ֆինանսներ(ըստ ոլորտի)» (միջին գնահատականը 3.6) կրթական ծրագրերի ուսանողների համար:

Ուսումնական պլանների արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից հարցման շրջանակներում փորձել ենք պարզել, թե շրջանավարտներն ինչ չափով են օգտակար համարում մատուցված դասընթացները և պրակտիկաները: Նշենք, որ շրջանավարտների միջին գնահատականները մասնաճյուղի համար կազմել են համապատասխանաբար **4.1 և 4.2** միավոր, որոնք ըստ էության վատ գնահատականներ չեն, եթե հաշվի առնենք, որ 10-ից 7 կրթական ծրագրերի համար այդ գնահատականները բարձր են 4.2-ից, իսկ արդյունքի վրա ազդել են «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (համապատասխանաբար՝ 3.7, 3.5), «Անգլերեն լեզու և գրականություն» (3.8), «Ֆինանսներ(ըստ ոլորտի)» (3,9) կրթական ծրագրերի շրջանավարտների տված ցածր գնահատականները:



Ուղղակի պետք է նշել, որ մասնաճյուղը տարբեր համագործակցային ծրագրերի շրջանակներում փորձում է բարելավել պրակտիկաների թե՛ մասնագիտական, թե՛ գործնական, և թե՛ բովանդակային մակարդակը, չնայած պետք է նշել որ այդ գործընթացի արդյունավետ իրականացման վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ համավարակը: Այնուամենայնիվ, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Ֆինանսներ» մասնագիտության ուսանողները վերջին տարիներին անցնում են նպատակային և խիստ մասնագիտական պրակտիկաներ:

2. Բավարարվածությունը մասնաճյուղում ուսանողների գնահատումից

ՄԿՈՒԱ բաժինն իր հարցումների և հանդիպում-քննարկումների ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձնում մասնաճյուղում ուսանողների գնահատման գործընթացի օբյեկտիվությանը, թափանցիկությանը, արդյունքների արժանահավատությանը: Այդ ուսումնասիրություններով բաժինը նպատակ ունի բացահայտել գնահատման հետ կապված խնդիրները, հավաքագրել ուսանողների ձեռքբերումների գնահատման լավ փորձը՝ տարածման նպատակով: Նշենք, որ մասնաճյուղի ղեկավարությունը և բաժինը պլանավորում են դասախոսական կազմի քննարկմանը ներկայացնել կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման ժամանակակից և փորձված գործիքներ: Բաժինն արդեն մշակել է մի քանի ուղեցույցներ, որոնք խմբագրման փուլում են և կներակայացվեն դասախոսների քննարկմանը: Ճիշտ կիրառվող գործիքները և հստակ մշակված գնահատման չափանիշները դասախոսին հնարավորություն կտան բացահայտել ուսանողի գիտելիքները և կարողությունները և ապահովել առավելագույն օբյեկտիվություն և թափանցիկություն: Օբյեկտիվ և թափանցիկ գնահատումը դժվար և խիստ կարևոր, ուսանողին մոտիվացնող և աջակցող, նրա մեջ հավատ ու վստահություն ներշնչող գործընթաց է, և այստեղ պետք է հնարավորինս բացառել սուբյեկտիվ գործոնը, ինչի առկայության մասին սովորաբար գրում են մեր ուսանողները (հատուկ վերաբերմունք անվճար սովորող ուսանողների նկատմամբ):

Այս հարցման արդյունքները գնահատման օբյեկտիվության և թափանցիկության վերաբերյալ մտահոգիչ են և նաև ցածր նախորդ տարիների արդյունքներից: Չնայած մասնաճյուղում գնահատման գործընթացի նկատմամբ մշտական հետևողականությանն ու ջանքերին, որոշ կրթական ծրագրերի շրջանավարտներ, այնուամենայնիվ, բավարարված չեն և նրանց տված գնահատականները չեն գերազանցում **3.5** միջին միավորը (օրինակ, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ համապատասխանաբար 3.3 և 3.4, «Անգլերեն լեզու և գրականություն»՝ 3.5 և 3.4): Այս ցածր արդյունքներն, իհարկե, իրենց ազդեցությունն են ունեցել մասնաճյուղի ընդհանուր միջին միավորների վրա՝ **3.9 միավոր**:



Առանձնահատուկ նշենք, որ օբյեկտիվությունից և թափանցիկությունից բավարարվածության ամենաբարձր գնահատակ տվել են «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի շրջանավարտները՝ **4.8** միջին միավոր:

Շրջանավարտների արտահայտած կարծիքները, գտնում ենք, որ ուշադրության են արժանի և առաջարկում ենք ամբիոններում **<u>քննարկել գնահատման հետ կապված խնդիրները</u>**, կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ՝ նրանցից լսել ակնհայտ խնդիրները, հասկանալ, թե կոնկրետ

որտե՞ղ և ինչպիսի՞ իրավիճակներում են տեսնում ոչ օբյեկտիվություն, ո՞ր իրավիճակներն են համարրում ոչ թափանցիկ, և արդյո՞ք այդ խնդիրներն առկա են բոլոր դասախոսների մոտ, թե պայմանավորված է կոնկրետ անհատներով, թե՞ խնդիրը գնահատման չափանիշների ոչ հստակ սահմանման և ներկայացման մեջ է և այլն:

Բոլորիս է հասկանալի, որ գնահատման գործընթացում առկա ցանկացած անհասկանալի իրավիճակ կարող է բացասական ազդեցություն ունենալ ուսանողի մոտիվացիայի և կրթության մեջ նրա ներգրավվածության վրա:

3. Բավարարվածությունը ավարտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից

Ամփոփիչ ատեստավորման քննությունների օբյեկտիվության վերաբերյալ շրջանավարտների գնահատականները բոլոր տարիների համար միշտ եղել են բարձր (4.4, 4.5): Այս ուսումնական տարում նույնպես պահպանվել է դրական կարծիքը և միջին միավորը եղել է **4.3**: Նշենք, որ 10 կրթական ծրագրերից 7-ում միջին միավորներն ընկած են 4.4-ից 4.8 միջակայքում («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա՝ 3.9), ինչը բավականին բարձր արդյունք է և ներկայացնում է շրջանավարտների բավարարվածությունն ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից, հանձնաժողովների աշխատանքից, ընդ որում հարցին պատասխանած 124 շրջանավարտներից **56-ը (48%-ը)** իր բավարարվածությունն արտահայտել է 5 գնահատականը նշելով:



Արդյունքները փաստում են, որ մասնաճյուղում ամփոիչ ատեստավորման հանձնաժողովներն աշխատել են արդյունավետ, պատասխանատվությամբ են կատարել իրենց աշխատանքը, նպաստել են շրջանավարտների ինքնադրսևորմանը, կարողացել են կարճ ժամանակում բացահայտել շրջանավրտի ձեռքբերումները և գնահատման մեջ լինել օբյեկտիվ՝ պահպանելով ավարտական աշխատանքների գնահատման չափանիշները:

Բոլոր կրթական ծրագրերի ղեկավարների, ամբիոնների վարիչների և դասախոսների ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ եթե կան **ամփոփիչ ատեստավորումից չբավարարված շրջանավարտներ**, ապա պետք է գտնել նման գնահատման դրդող խնդիրները, հասկանալ պատճառները, հետագայում աշխատել ապագա շրջանավարտների հետ, նրանց ներկայացնել ավարտական աշխատանքների գնահատման կարգն ու չափանիշները: Նման հարցերում իրազեկված ուսանողը կկարողանա օբյեկտիվ գնահատել ինքն իրեն և վստահել հանձնաժողովին:

Ամփոփիչ ատեստավորման արդյունավետ կազմակերպման գործում իրենց անմիջական ներդրումն ունեն **<u>ավարտական աշխատանքների ղեկավարները</u>**, որոնց աջակցությամբ ուսանողները պատրաստում են իրենց ավարտական աշխատանքները, հավաքագրում են տվյալներ, կատարում են վերլուծություններ, ընտրում են հետազոտման մեթոդներ, ամփոփում են իրենց կատարած աշխատանքը և պատշաճ ու կազմակերպված ներկայանում պաշտպանության: Նշենք, որ շրջանավարտների պատրաստվածության և աշխատանքների գրագետ և բարձր մակարդակով ներկայացման վերաբերյալ իրենց դրական կարծիքներն են արտահայտել ամփոփիչ ատեստավորման բոլոր հանձնաժողովների նախագահները:

Շրջանավարտներն իրենց գոհունակությունը ղեկավարների աջակցությունից և աշխատանքից արտահայտել են բարձր գնահատականներով՝ միջին միավորը **4.7,** այստեղ համեմատաբար ցածր են գնահատել «Ֆինանսներ» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտները՝ **4.3** միջին միավոր, իսկ առանձնահատուկ պետք է նշել «Զբոսաշրջություն» և «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտներին, որոնք իրենց ղեկավարների աշխատանքը գնահատել են **5** (հույս ունենք, որ ղեկավարների աշխատանքին տված այս գնահատականները չեն նշանակում, որ ղեկավարը աշխատել է ուսանողի փոխարեն):



Փորձի փոխանակման շրջանակներում, հավանաբար, կարելի է կազմակերպել ամբիոնների միջև հանդիպում-քննարկումներ, առանձնացնել ղեկավարման հետ կապված խնդիրները, նշել ուսանողների հետ ճիշտ և նրանց ինքնազարգացմանը նպաստող մոտեցումները, և այլն:

4. Բավարարվածությունը ուսումնական ռեսուրսներից և համալսարանական միջավայրից

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը նպաստում են տրամադրվող ուսումնական ռեսուրսները: Մասնաճյուղը պարբերաբար բարելավում է իր լսարանային ֆոնդը, թարմացնում դրանց կահավորանքը, ակտիվացնում է համակարգչային սրահների գործունեությունը՝ նրանց համար ապահովելով անխափան ինտերնետ կապ, համալրում է գրադարանային ֆոնդը և այլն:

Նշենք, որ հարցմամբ ստացված արդյունքներն ընդհանուր առմամբ բարձր չեն, ուղղակի բավարար են:



Սակայն դրանցից մի քանիսի արդյունքներն, ըստ մեզ, **անհասկանալի ցածր են**: Խոսքը վերաբերում է համակարգչային սրահների և համացանցի մատչելիությանը (համապատասխանաբար **4.1 և 4.0**), այն դեպքում երբ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներում գործում են ժամանակակից համակարգիչներով և անհրաժեշտ այլ տեխնիկական սարքերով համալրված համակարգչային սրահներ՝ ապահովված անվճար ինտերնետ կապով: Ընդ որում, զարմանալի է բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողների անբավարարվածությունը, երբ այնտեղ գործում են 2 տեխնիկապես հագեցած և կահավորված համակարգչային սրահներ: Հասկանալի չէ շրջանավարտների դժգոհությունը լսարանների կահավորանքից: Հարց է առաջանում, իսկ ի՞նչ կահավորանք պետք է ունենա լսարանը, որը չկա, կամ եթե լսարանի կահավորման հետ խնդիր կա, ապա ուսանողներն այդ մասին արդյո՞ք տեղեկացրել են ֆակուլտետի ղեկավարությանը և այլն:

Անակնկալ չէր, որ շրջանավարտները բավարարված չեն եղել գրադարանում ժամանակակից մասնագիտական գրականության առկայությունից: Մասնաճյուղը պարբերաբար ավելացնում է մասնագիտական գրականության քանակը, դրանց պակասությունը լրացվում է էլեկտրոնային գրադարանի ռեսուրսներով, սակայն խնդիրն առավելապես լուծել դեռևս չի ստացվում:

Ուշադրության է արժանի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի շրջանավարտների ընդգծված անբավարարվածությունը բոլոր տրամադրվող ռեսուրսներից (միջին միավորը **3.3-3.7**), և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի շրջանավարտների լրիվ բավարարվածությունը տրամադրվող ռեսուրսներից (միջին միավորը **4.8-5.0**):

Այս արդյունքները վկայում են, որ մեր բաժինը և ֆակուլտետներն առանձին ուսումնասիրություն պետք է կատարեն պարզելու համար լսարաններից, համակարգչային սրահներից, համացանցի աշխատանքից մեր ուսանողների դժգոհության պատճառները:

Համեմատաբար բարձր են մատուցվող ծառայությունների համար շրջանավարտների տված գնահատականները: Շրջանավարտներն իրենց ուսումնառության ընթացքում դիմել են



մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարությանը, մշտապես աշխատել են պրոֆեսորադասախոսական կազմի հետ և համագործակցել են ուսանողական կառույցների հետ: Ընդհանուր առմամբ նրանք բավարարված են համալսարանական միջավայրից.

Տարբեր ուսումնասիրություններում ուսանողներն արտահայտել են իրենց գոհունակությունը դասախոսական կազմի վերաբերյալ, և փաստել, որ մասնաճյուղում դասավանդում են բարձրորակ և սրտացավ դասախոսներ:

5. Շրջանավարտների կարծիքը կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ

Թվում է, թե մասնաճյուղում կոռտուպցիոն երևույթների առկայության մասին հարցը վաղուց արդեն տեղին չէ և անիմաստ է, սակայն այնուամենայնիվ ներգրավված է հարցման մեջ: Եվ ամեն անգամ վստահաբար մտածում ենք, որ մասնաճյուղը հաղթել է այդ վտանգավոր երևույթին:

Հարցը ներառվել է պարզելու համար, թե մասնաճյուղում արդյոք կոռուպցիոն երևույթներ կան, թե ոչ, իսկ ավելի տարողունակ է այն խնդիրը, որը կապված է վճարովի մասնավոր պարապմունքների առկայության փաստի հետ:

Թեկուզ քիչ, բայց հարցման արդյունքներով պարզ դարձավ, որ մասնաճյուղում դեռևս նման երևույթներ կան: Հարցմանը մասնակցած 124 շրջանավարտներից 3-ը նշել է, որ վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով, իսկ 12-ը նշել է, որ ականատես է եղել նման երևույթի:



Վերջին ցուցանիշն իր մեջ խորը խնդիր է պարունակում, որը նույնպես լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի: Պետք է հասկանալ, թե խնդիրը արդյո՞ք ուսանողի մեջ է, այսինքն, նա դժվարանում է և կարիք ունի այդ բացը լրացուցիչ պարապմունքով լրացնելու, թե՞ խնդիրը դասընթացի բարդության, անմատչելիության կամ դասախոսի անձի մեջ է, և ինչու՞ ուսանողները չեն օգտվում ամբիոնների կողմից իրականացվող լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից:

6. Բավարարվածությունը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից

Վերջին երկու հարցերն ամփոփում և ամբողջական ներկայացնում են շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ստացած կրթությունից: Այդ երկու հարցերից ստացված արդյունքներն ըստ էության հանդիսանում են շատ խնդիրների լուծման բանալիներ, ընդհանրացնում են բոլոր խնդիրները մեկ ընդհանուր գաղափարի մեջ և ուղորդում են պատասխանատու և շահագրգիռ կողմերին ևս մեկ անգամ գնահատել անցած ճանապարհն ու ձեռքբերումները և շարունակել ճիշտ ընտրված և նվիրական աշխատանքը. կրթել մարզի երիտասարդությանը, դառնալ նրանց ապագայի երաշխիքը և մշտապես բարելավել կրթության որակը, դաստիարակել և պատրաստել ունակ և հայրենասեր երիտասարդներ և այլն:

Շարունակելով այս միտքը նշենք, որ մասնաճյուղի հերթական ուստարվա շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են մասնաճյուղում ստացած իրենց կրթությունից և այն գնահատել են բավականին բարձր. 10 կրթական ծրագրից 3-ի շրջանավարտներն իրենց բավարարվածությունն արտահայտել են միջինը **4.6, 4.8 և 5.0** միավորներով («Պատմություն», «Զբոսաշրջություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ»), 5 կրթական ծրագրերում միջին միավորները եղել են **4.0-ից 4.3** միջակայքում, իսկ ահա «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի շրջանավարտներն այնքան էլ բավարարվախ չեն իրենց ստացած կրթությունից՝ միջին միավորը **3.7 և 3.9**:



Համապատասխան ամբիոններին և կրթական ծրագրերի ղեկավարներին առաջարկում ենք **ուշադրություն դարձնել** այս արդյունքներին: Մասնավորապես, մարզի դիմորդների կողմից պահանջված այդ երկու կրթական ծրագրերի ուսանողների շրջանում պետք է անցկացնել հանդիպում-քննարկումներ, նրանց հետ պարզաբանել կրթության որակի, ուսումնական

պլանների, դասավանդող դասախոսական կազմի հետ հնարավոր խնդիրները, լսել նրանց առաջարկները, գտնել լուծումներ, բարձրացնել նրանց վստահությունը մասնաճյուղի նկատմամբ:

Վերջում նշենք, որ մեր շրջանավարտներն այնուամենայնիվ բավարարված են մասնաճյուղում ստացած իրենց կրթությունից և նրանց գերակշիռ մասը՝ **77%-ը** (125-ից 96-ը) խորհուրդ կտա իրենց մերձավորներին և ընկերներին բարձրագույն կրթություն ստանալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:



Այստեղ, նորից, ուշադրության է արժանի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի շրջանավարտների վերջնական որոշումը. այնուամենայնիվ, նրանց **84%-ը** (19 շրջանավարտից 16-ը) կարևորում է մասնաճյուղը և խորհուրդ են տալիս դիմել մասնաճյուղ:

Ամփոփելով նշենք, որ մենք հանկված ենք մտածելու, որ մեր շրջանավարտներն ակեղծ են եղել իրենց իրենց պատասխաններում: Իսկ մասնաճյուղի ուսումնական գործընթացը կազմակերպող և իրականացնող բոլոր օղակներին առաջարկում ենք քննարկել այս գնահատականները, համագործակցել մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի և կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի հետ կրթության որակի հետ կապված խնդիրները բացահայտելու, քննելու և լուծման կամ բարելավման ուղիներ գտնելու համար:

Գտնում ենք, որ շրջանավարտներն իրենց պատասխաններով արտահայտել են իրենց սրտացավությունն ու աջակցությունը սիրելի կրթօջախին:

Նշենք, որ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը պատրաստել է կրթության բարելավմանն ուղված մի շարք առաջարկներ, որոնք կներկայացվեն ամբիոններ՝ քննարկման համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին